Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

09.11.2026թ *ք. Երևան*

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների բաժնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, արդարադատության փոխգնդապետ՝ Վազգեն Գալումյանս, ուսումնասիրելով 02 հունիսի 2026 թ. հարուցված թիվ 14940562 և 14940563 կատարողական վարույթները՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 01 հունիսի 2026 թ. տրված թիվ ԵԴ2/0125/02/26 կատարողական թերթի համաձայն պետք է Գոռ Միերի Խլղաթյանից և Ֆենյա Սմբատի Սմբատյանից համապարտության կարգով ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ ՓԲԸ -ի օգտին բռնագանձել 3503520 ՀՀ Դրամ, ինչպես նաև հաշվեգրվող տոկոսներ: Բռնագանձումը տարածել ՀՀ, Երևան, Մալաթիա Սեբաստիա, Կուրղինյան փողոց 29-րդ շենք, բնակարան թիվ 25 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա, իսկ դրա անբավարարության պարագայում նաև պատասխանողներին պատկանող այլ գույքերի վրա:

Կատարողական գործողությունների ընթացքում արգելանք է դրվել պարտապաններ՝ Գոռ Միերի Խլղաթյանին և Ֆենյա Սմբատի Սմբատյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան, Մալաթիա Սեբաստիա, Կուրղինյան փողոց 29-րդ շենք, բնակարան թիվ 25 հասցեի անշարժ գույքի վրա:

Հարկադիր կատարողի կողմից կայացվել է «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը և տեխնիկական վրիպակի պատճառով որոշման առաջին պարբերությունում կատարողական վարույթ 14940562 և 14940563 փոխարեն նշվել է 14940562:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը և ղեկավարվելով «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 22-րդ, 50-րդ հոդվածներով, «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 23-րդ և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Փոփոխել Հարկադիր կատարող, արդարադատության կապիտան Արուսնակ Կուրտիկյանի կողմից կայացված «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշման առաջին պարբերությունը հետևյալ կերպ.

«Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության կապիտան Արուսյակ Կուրտիկյանս ուսումնասիրելով թիվ 14940562 և 14940563 կատարողական վարույթի նյութերը ... »:

Որոշման պատճեն ուղարկվել է կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան օրենքով սահմանված ժամկետներում:

«Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԳՆԱՊԵՏ ՎԱՉԳԵՆ ԳԱԼՈՒՄՅԱՆՍ